

Roma, 10 Settembre 1950.

Impossibilitati intervenire celebrazione in-
viamo calorose adesioni con devoti ossequi
a sua Eminenza Cardinale Agagianian et
venerabile Congregazione Mechitarista.

GIORGIO FIORE
PAOLO ZACCARIAN

Milano, 10 Settembre 1950.

I più devoti e affettuosi auguri.

SERABIAN STEFANO

Roma, 7 Settembre 1950.

Vogliate considerarmi presente solenni
cerimonie benemerita Congregazione.

Architetto GAI

Milano, 7 Settembre 1950.

Impossibilitati intervenire personalmente
partecipiamo spiritualmente manifestazione
omaggio insigne Fondatore Congregazione;
ossequi.

Famiglia PILOYAN

Novara, 7 Settembre 1950

Impossibilitato partecipo spiritualmente
gaudio feste Venerabile Abate Mechitar.

Vostro ex allievo

AKELIAN GREGORIO

Յանդորդով պիտի հրատարակենք շնորհա-
տրական նամակները:

ԼՈՅՍ ՏԵՍԱԻ

1950-ի «ԳԵՂՈՒՆԻ»-ն

Յորելինական հանգեցնեցին օրերուն լոյս տեսաւ 1950-ի «ԳԵՂՈՒՆԻ»-ն,
նուիրուած Միւրթար Արքայի մահուան 200-ամեայ նուիրական յիշատակին:

Առաջին օրինակները սպառնացան վանքի պարտէզին և նախագաւթին մէջ,
տպարանի դռներուն առջեւ. հանգիսականներ և հիւրեր իսկոյն հմայուեցան գե-
ղազարդ կողքէն՝ ուր ոսկեզարդ շրջանակի մէջ կը ցոյցէր Մեծ Սերաստացիին
ազգեցիկ կրտսերին, և օրինակ մը անպատճառ ուղեցին հետերնին տանիլ:

Ահա ամիս մը անցաւ այդ օրէն, և Հայ Մամուլը, զմայլանքի ու գովեստներու
տողերով, աշխարհի ամէն կողմէ կու գայ գնահատելու «ԳԵՂՈՒՆԻ»-ի այս նոր
թիւը, որ իր գեղարուեստական ու գրական բովանդակութեամբ կը գերազանցէ
նախընթացը (1947-ին):

Կը մասնակցին արդարեւ ազգային գրողներ, նկարիչներ, արձանագործներ՝
իրենց լաւագոյն գործերով. հայկական հին արուեստը՝ մանրանկարչական ու ճար-
տարապետական նմոյշներով կը ճոխացնէ զայն:

Նշանակուած գինն, է 15 տոլար՝ Ամերիկեան երկիրներու, 5 սթեր-
լին՝ Անգլիական երկիրներու համար:

Ազգայիններ, փութացէ՛ք ապահովցնել օրինակ մը այս գեղատիպ ու շքեղ հրա-
տարակութենէն՝ զիմեով ուղղակի մեզի, կամ մեր ներկայացուցիչներուն:

ՎԵՐԱԲԱՑՈՒԱԾ Է

ՄՈՒՐԱՏ-ՌԱՓԱՅԷԼԵԱՆ ՎԱՐԺԱՐԱՆԸ

ՄՈՒՍԷ մը ի վեր բացուած է արդէն և
կը գործէ Մուրատ-Ռափայէլեան
վարժարանը:

Միջազգային երկրորդ աղետալի պատե-
րազմէն վերջ, ներքին նորոգութիւններու
համար առժամապէս փակ մնացած Հայ
Մտքի այս խանձարուրդը, ընդառաջ եր-
թալով մեր ազգայիններուն ալ փափաքին,

բացաւ վերստին իր դռները հայ նոր սե-
րունդին համար:


Վիեննայի պէս գեղարուեստական քա-
ղաքի մը մէջ, — ուր մեծ արուեստագէտ-
ներ, մեծ բանաստեղծներ առած են իրենց
ներշնչումը, — Մուրատ-Ռափայէլեան
վարժարանը մէկ դարէ աւելի շարունակ
գործած է յօգուտ հայ ազգի զաւակներուն,

կրթելով անոնց միտքը և հո-
գին, նրբացնելով անոնց ճա-
շակը և պատրաստելով փա-
ղանգ մը հայ մտաւորական-
ներու, որոնք իրենց անուրա-
նալի դերը խաղացած են ազ-
գային զանազան խաւերուն
մէջ՝ հրապարակագրութեամբ,
բարձր գրականութեամբ, քա-
ղաքական գործունէութեամբ,
արթնցնելով ամէն կողմ ան-
կեղծ ու ճշմարիտ հայրենասի-
րութեան զգացումը, սէրը ազ-
նիւին, բարին և գեղեցիկին:

Ազգային այս մեծ վարժա-
րանը, իր շքեղ դահլիճներով,
իր լայն ու գեղազարդ սրահ-
ներով, իր ունեցած բազմադիմի
առաւելութիւններով, իր տուած
լուրջ դաստիարակութեամբ և
ուսումնական նոր ծրագրով,
պէտք է զրաւէ ուշադրութիւնը
բոլոր հայ ծնողներու, որ առաջ
ղրկելու իրենց զաւակները հոն՝
ուսկից ելած են երեւելի հայ
դէմքեր, ինչպէս Մկրտիչ Պէ-
շիկթաշեանները, Թովմաս
Թերզեանները, Մկրտիչ Աճէմ-
եանները, Սրապիոն Թիւեան-
ները, Արփար Արփարեան-



ՀԱՅԱՏ ՄՈՒՐԱՏ-ՌԱՓԱՅԷԼԵԱՆ ՎԱՐժԱՐԱՆԸ



ՄՈՒՐԱՏ-ՌԱԲԱՅԵՒԵԱՆ ՎԱՐԺԱՐԱՆԻ ԹԻԷՓՈՒԵԱՆ ԴԱՆՆԻՃԸ

ները, Դանիել վարժապետները, Խարայել Տխրունիները, Բարսեղ Շահապանները, Էտկար Շահինները, Կարապետ Աղամեանները, Վահրամ Փափագեանները, Գուրգեն Ալեքսանները, Յարութիւն Աճեմեանները, որոնք հայ գրականութեան, հայ հրապարակագրութեան, հայ երաժշտութեան, հայ

թատրոնին, հայ քանդակագործութեան և հայ նկարչութեան տուած են ամենալայն մղում և զարգացում:

Անթիւ են յետոյ հայ բժիշկները, ճարտարագէտները, առեւտրականները, որոնք այս վարժարանին մէջ կը թուած՝ գրաւած են անցեալին մէջ և ներկայիս ալ կը գրաւեն աշխարհիս զանազան կողմերը պատուաբեր դիրք մը, իրենց անձին, իրենց ընտանիքին և իրենց ազգին համար:

Մուրատ-Ռափայէլեանի առաւելութիւնները շատ են: Հոս հայ տղան կը մեծնայ հայ, կատարեալապէս կը հրահանգուի իր մայրենի լեզուին մէջ, կը սորվի բացի դարուս գիտութիւններէն՝ նաեւ անգլիերէն, ֆրանսերէն և իտալերէն օտար լեզուները, կը ստանայ եւրոպական կրթութիւն, և տարեշրջանը աւարտելուն՝ կը ստանայ Լիկեոնական վկայական, որ իրեն իրաւունք կու տայ յաճախելու Եւրոպայի Համալսարանները: Մուրատ-Ռափայէլեան վարժարանի վկայականը ճանչցուած է ոչ միայն իտալական կառավարութենէն, այլ նաեւ Ֆրանսայի, Պելճիքայի և Զուիցերիոյ և ուրիշ ազգերու



ՄԿՐՏԻՉ ՊԵՇԻԿԹԱՆԵԱՆ




ՎԱՐժԱՐԱՆԻ ՊԱՐՏԷՋԸ

Համալսարանական կազմակերպութիւններէն. հետեւաբար Մուրատ-Ռափայէլ

լեանէն շրջանաւարտ մը, առանց պետական ըննութեան ներկայանալու, կրնայ իսկոյն մտնել Համալսարան և հետեւիլ իր նախասիրած մասնաճիւղին:



ԹՈՎԱՍԹ ԹԵՐԶԵԱՆ



ԴԱՆԻԷԼ ՎԱՐՈՒԺԱՆ

Հայ Գաղութներու մէջ ցրուած հայ ծնողներ, փութացէ՛ք ապահովել ձեր զաւակներուն ապագան, արձանագրել տալով Մուրատ-Ռաֆայէլեան վարժարանը, փոխանակ զանոնք յանձնելու օտար զարոյցներու: Վարժարանին Տեսչութիւնը պատրաստ է ընդունելու աշակերտներու արձանագրութիւնները, բացառաբար այս տարի նոյնիսկ ուսումնական Տարւոյն ընթացքին:

ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

1. - Կ'ընդունուին 10-14 տարեկան տղաքներ:
2. - Ամսաթուղակն է իտալիոյ համար՝ 20.000 լիւբթ, Ֆրանսայի համար՝ 12.000 ֆրանք, Բրիտանական երկիրներու համար՝ 12 սթերլին, Ամերիկայի համար՝ 35 տոլար:

Մանրամասնութեանց համար գիտել

Direction du COLLÈGE ARMÉNIEN MOORAT-RAPHAËL

Ai Carmini

VENISE

(Italie)



Տեսչութիւն



ԳՐԱԴԱՐԱՆ ԱՆՍՏԱՆ

ՇՆՈՐՀԱԿԱԼՈՒԹԵԱՄԲ ՍՏԱՅԱԾ ԵՆՔ

— ԵՆՔ —

ԱՐԵՂԵԱՆ ԱՐՏԱՇԷՍ. - Քերտրէ Պատկանեան Գորպա-
տու. (Ազգ. Մտ. ՃԿԱ). Վիեննա, 1949, էջ 54.
ԱՂԱՏԱՆԵԱՆ ՊԵՏՐՈՍ Գ. Ե. ԿԱԹՎ. - Միլիթարի Հո-
մէականութիւնը. Պէյրութ, 1950, էջ 16.
ԱՆՈՒՑ ԺԱՆ. - Բոմբոյ և Ժանէթ. Քրդի. Մ. Հաճեան.
Իսթանպուլ, 1850, էջ 85-164. տե՛ս Կոլտոնի.
ԱՆՍՈՒՐԵԱՆ ՅԱԿՈԲ Մ. - Աշնան Միւլեր (Վէպ). Ադե-
սանդրիա, 1949, էջ 155.
ԱՐՓԻԱՐԵԱՆ Ա., ԶԱՔԱՐԵԱՆ Թ., ԱՍՏԱՌԻ Հ. - Յովսէփ
Շիշմանեան (Մերենց). Հրա. Հ. Գրիբի Բարեկամե-
րու Ընկերութեան. Գաշիքէ, 1946, էջ 76.
ԳՈՅՈՒՄՃԵԱՆ ՄԵՍՐՈՊ Կ. - Ընդարձակ բառարան Հայե-
րէն-Անգլիկէն. Գաշիքէ, 1950, էջ 1150.
ԳԵՐԵՆԻԿ ԵՊԻՍԿՈՊՈՍ. - Հոգիներուն համար. Անթի-
լիա, 1950, էջ 141.
ԵՂԻՇԷ. - Վարդանանց Պատմութիւն. Քարգմանութիւն,
ուսումնասիրութիւն, ծանօթագրութիւն. Պրոֆ. Ե.
Տէր-Միհայիլեան. Գաշիքէ, 1950, էջ 322.
ԵՐԵՄԵԱՆ ԱՐՄԱՐ. - Կատարեալ (պատկեր իրական կեան-
քից). Իսթանպուլ, 1949, էջ 40.
ԶՈՀՐԱՊԵԱՆ ԿԻՐԵՂ ԵՊԻՍԿ. - Թուղթ Հովուական -
1950. Պէյրութ, 1950, էջ 24.
ԿՈՒՏՈՆԻ ԳԱՐԼՈՑ. - Պանդակապատէին. Քրդի. Մ.
Հաճեան. Իսթանպուլ, 1950, էջ 84.
ԿՈՒՏՈՆԱՆ ՎՐԿ. - Կ. Վ. Ե. Կոթմաստեան անաթոլի երգե-
րէն՝ ըսան ժողովրդ. երգեր. զանաւորեց՝ Գոհարիկ
Ղազարոսեան. Անթիլիա, 1950, էջ 31.
ՀԱՅՊԵՏ ԵՂ. - Շերինի սիրտը (Գերիշական զրոյց).
Թէհրան, 1930, էջ 50.
» » - Հարսնավազի հրաշքը (պատմական
պոէմ). Թէհրան, 1943, էջ 50.
ՄԱՌԻ ՀԱՅԿԱՆՈՑ. - Զարուհի Գալէմեարեան. Իսթան-
պուլ, 1950, էջ 22.
ՄԷՐԼ ՓԻԷՆ. - Բանականօրէն անբացատրելի բուժում-
ները (Քրդի. Սահակ Պալեզեան). Գաշիքէ, 1950,
էջ 44.
ՄԿՈՒՆԴ ՏԻԳՐԱՆ. - Յիւնամիակ Հայ երեցական եկե-
ղեցոյ. Ուիլհելմ, 1950, էջ 64.
ՆԱՇԱԼԵԱՆ ՅԱՐՈՒԹԻՆ Ս. - Հայկական և օտար բա-
րոյական զուարճալիքներ. Պէյրութ, 1919, էջ 330.
ՆԱՇԻԵԱՆ Գ. - Գայլիկներու աշխարհէն. Պէյրութ,
1949, էջ 68.
ՇՈՂԱԿԱՆ. Ընթերցարան. Գ. Ե. Զ. Է. Կատարաններու
համար. Հալէպ, 1950.
ԶՈՊԱՆԵԱՆ ԱՐՇԱԿ. - Բանաստեղծութիւններ. Փարիզ,
1950, էջ 352.
ՊԵՏԻԿԵԱՆ Ա. Ա. - Ճրագ. Գրիբ Բ. Նիւ Երբ, 1948,
էջ 186.

ՊԵՐՊԵՐԵԱՆ ՀԱՄԲԱՐՁՈՒՄ. - Եկեղեցին Հայկական
(Օրաթորիոյ). ութամյա խմբիկ ընկերակցութեամբ
երգեհոնի կամ զանաւորի. Անթիլիա, 1950, էջ 42.
ՊՕՂԱՐԵԱՆ ԳՐԻԳՈՐ. - Կեանքի նոր շրջանի մը սեմին.
Հալէպ, 1950, էջ 94.
ՍԱՀԱԿԵԱՆ Գ. - Առաջնորդ... (բժշկական) Պրոֆէշ,
1924, էջ 63.
ՍԱՀԱԿԵԱՆ Ս. - Բարձրերկ (քերթուածներ). Գաշիքէ,
1946, էջ 118.
ՍԱՍՈՒՐԻ Կ. - Գրական զոհարներ. Պէյրութ, 1949,
էջ 523.
ՍԻՄՈՆՅԱՆ Գ. ԳԵՐԱՍԱՆ. - Տաղը և Թատերգութիւնը.
Հա. Ա. Բ. Գ. Նիւ Երբ, 1948-49, էջ 100, 126,
127.
ՍԻՐԻՄԷ ԵՄ ԱՐՏԱՌՁԻ ԱՐՔԵՊՍԿ. - Մայր Յուցակ
Հայերէն Զեռագրաց Եւրոպայի մասնաւոր հաւաքում-
ներու. (Ա. Հատոր). Փարիզ, 1950, էջ 90.
ՍՐՈՒԱՆՏՏԵԱՆՑ ԳԱՐԵԳԻՆ ԵՊԻՍԿ. - Համով Հոտով.
(Բ. Հատոր). Փարիզ, 1950, էջ 215.
ՏԵՐ ՄԻՆԱՍԵԱՆ Ա. - Գիր և Երգիծանք. Իսթանպուլ,
1950, էջ 176.
ՏԵՐ ՄԻՔԱՅԷԼԵԱՆ ՆԱՅԵՆ. - Վարդները. Փարիզ, 1950,
էջ 160.
ՓԱՓԱՅԵԱՆ Վ. - Իմ յուշերը. Պրոֆէշ, 1950, էջ 599.
ՔԷՐԵԿԵՐԵԱՆ ՄԵՍՐՈՊ ՔԷՆՑ. - Քրիստոնէութիւն և
մենք. Ադեփանդրիա, 1934, էջ 152.
» » » - Ոսկեմատեան - Յի-
շատարան տասնհինգամեակի հիմնարկութեան Ե-
կեղեցասիրաց Միութեան Հայոց Ադեփանդրիոյ. Ա-
դեփանդրիա, 1947, էջ 204.
» » » - Պատգամներ Ս. Գըր-
քէն... Ադեփանդրիա, 1948, էջ 245.
ԷՂԵՐ Հայ Գրականութեան (Բ. Հատոր). - Հրա. Հ. Գ.
Բ. Ը. Գաշիքէ, 1943, էջ 351.
Հալէպի բարեգործականի մեծ ու պզտիկ ագրուկները.
Հալէպ, 1850, էջ 19.
ՆԿԱՐԱՀԱՆՈՒԹԵԱՆ. - Հրա. Հայ Մշակ. Միութիւն. Թէհ-
րան, 1950, էջ 36.
Achdjian Albert. - Le Tapis-The Rug. Paris,
pg. 297.
Bodurian Pr. M. - Luna Rozie (tr. E. C. Zamfir).
Sepsiszentgyörgy, 1945, pg. 116.
Missakian I. - A Searchlight on th. Armenien
Question. Boston, 1950, pg. 154.
Missakian Dr. B. - La medicina armenia (Actas
liba, 1950, 3.er trimestre).
Petrowicz Sac. Gregorio. - L'unione degli armeni
di Polonia con la S. Sede. Roma, 1950, pg. 334.
Safastian Arsak. - The land of Khurri in the
armenian language... London, 1950, pg. 17.
Sarmelian Z. Leon. - 98. 6°. New York, 1950,
pg. 313.